ազգի մէջ։ Հիմքը՝ ինքն ժողովուրդն է, իսկ մենք չգիտենք այդ հիմքը որքան հաստատուն է։ Մենք չգիտենք իսկապէս ի՞նչ է հայ ազգը, որովհետեւ մենք չգիտենք նրա թիւը, չգիտենք նրա դրութիւնը, չգիտենք այն պայմանները, որոնց ենթարկուած է նրա կեանքը զանազան երկիրներում, այն յատկութիւնները, որոնք սեպհական են նրան։ Մինչեւ անգամ մեր լեզուն, մեր գրականութիւնը զանազան տեղերում՝ ուրոյն ուրոյն ուղղութիւն են ստանում։ Ի՞նչ վիճակի մէջ է գրած Թիւրքիայում հայ դպրոցական գործը, ի՞նչ ուղղութեամբ է գործում այնտեղ մամուլը, որքան բարեյաջող է ժողովրդի տնտեսական դրութիւնը, ի՞նչ տեսակ տարրներով է նա շրջապատուած, եւ այլն, մինչ այժմ եւս սրանց մասին մեր ունեցած տեղեկութիւնները՝ միայն կցկտուր եւ անկապ բաներ են։ Այս կողմից եւս առաւել անգէտ են Թիւրքիայի Հայերը մեզ՝ Ռուսահայերիս եւ Պարսկահայերիս վերաբերմամբ։ Գաւառներում միայն մի բան գիտեն, — թէ իրենցից հեռու կայ մի հայաւեան կենդրոն՝ — Էջմիածինը, եւ ուրիշ ոչինչ։

Իսկ մինչեւ վերջին սոսկալի աղէտները, մինչեւ վերջին կոտորածները՝ կրօնական հալածանքը դեռ մեծ դեր էր խաղում Թիւրքիայի Հայերի մէջ. Հայ-լուսաւորչականը հալածում էր Հայ-կաթուղիկէին եւ Հայ-բողոքականին. սա եւս նրանց, բայց այն՝ ինչ որ դարերի ընթացքում՝ չկարողացաւ կատարուել, վերջին սոսկալի